ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 1958-Ա « 14 » ապրիլի 2026 թ.

Ն.ՉԱՐԲԱԽԻ 8-ՐԴ ՓՈՂՈՑԻ Հ.69 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՃՇՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՏԱԿԱԳԻԾ ԹՈՂԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք է հանդիսացել Ռուզան Թովմասյանի լ/ա Հայկ Թովմասյանի դիմումը՝ Ն.Չարբախի 8-րդ փողոցի հ.69 հասցեում գտնվող (տնամերձ) հողամասի սահմանները ճշտելու մասին:

Հարցի քննարկման համար հիմք են հանդիսացել «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի 2023 թվականի նոյեմբերի 30-ի հ.Հ-15358 և 2025 թվականի դեկտեմբերի 15-ի հ.12555 գրությունները՝ կից փաստաթղթերով, Երևանի Շահումյանի շրջխորհրդի գործկոմի 10.11.94թ. հ.38/8 որոշումը, 07.11.1994թ. Ն.Չարբախի գյուղ խորհրդի գործադիր կոմիտեի նիստի հ.17 արձանագրության քաղվածքը և ներկայացված 1993 թվականին կազմված հատակագիծը, 10.09.2025թ. հ.15250 նոտարական ակտը, ՀՀ կադաստրի կոմիտեի 21.10.2025թ. հ.ԱՏ-21102025-01-1047 տեղեկանքը և հարևան հողօգտագործողների հայտարարությունները:

Հարցի ուսումնասիրությունից և հ.Դ-100585-25 դիմումով ներկայացված որակավորում ունեցող անձի կողմից կազմված առանց համադրումների չափագրության ճշգրտումից պարզվել է, որ Ն.Չարբախի 8-րդ փողոց հ.69 հասցեի հողամասի մակերեսը կազմում է 358.40քմ, որը չի համապատասխանում փաստաթղթերում ամրագրված 360.0քմ մակերեսին և ընդգրկված չէ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների ցանկում, գտնվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի հ.1023-Ն որոշմամբ հաստատված Երևան քաղաքի հողերի տարածագնահատման 10-րդ գոտում:

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 49-րդ հոդվածով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 3-րդ, 53-րդ, 59-րդ և 60-րդ հոդվածներով, հողային օրենսգրքի 52-րդ և 59-րդ հոդվածներով, հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտա-րապետության և քաղաքաշինության վարչության հ.Դ-128674-25 եզրակացությունը.

1. Սահմանել, որ Ն.Չարբախի 8-րդ փողոցի հ.69 հասցեում գտնվող (տնամերձ) 358.40քմ մակերեսով հողամասի սահմանները որոշվում են սահմանված կարգով հաստատված հատակագծով:

2.Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման՝ ՀՀ կադաստրի կոմիտեում:

3. Որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

4. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության, անշարժ գույքի կառավարման վարչությունների պետերի վրա:

5. Որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ